№ 152 Օգոստոսի 30 (Սեպտեմբերի 11) **1880** Օգոստոսի 30 (Սեպտեմբերի 11) № 152

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռայի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Հայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի համալսարանը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Բաղուից։ Նամակ Դուշէթից։ Նամակ Ուզունլարից։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հայաստան։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագրիներ։—Հայտարարութիւններ։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

—

Մեր հինգշաբթվայ համարում յիշեցինք «Русская Рѣчь» ամսագրի յօդուածը Թիւրքիայի ներքին դրութեան մասին։ Յօդուածի վերջում հեղինակը ասում է որ Ռուսաստանը պէտք է ամեն ջանք գործ դնի որպէս զի խմբի Կոնդրկովկասում հայոց ինտելիգենցիան, Թիւրքաց Հայաստանի վրա ներգործելու համար և բարձրացնի այդ ինտելիգենցիայի մրցաւոր մակերևոյթը, շտապելով հիմնել Թիֆլիսի համալսարանը։

Շատ ուրախ ենք որ ռուս ամսագրի միտքը բոլորովին հաստատական է այն մտքին, որ մենք արդէն յայտնած էինք «Մշակի» մէջ և որի համար, ինչպէս մեր յայտնած ուրիշ մտքերի համար, մեծ մասամբ թշնամութեան և հայհոյանքների ենք հանդիպել...

Ուրեմն «Русская Рѣчь» ամսագիրն էլ այն կարծիքի է որ Թիֆլիսի համալսարանի գլխաւոր նպատակը պէտք է լինի բարոյապէս և մասաւորապէս ազդել Թիւրքիայի հայերի վրա։ Մենք մեր յօդուածում յիշած էինք բացի Թիւրքաց հայերից և Պարսկաստանի հայերին։ Մենք նայեցինք հարցի վրա ոչ թէ միայն ազգային տեսակէտից, բայց և ռուսաց պետական շահերի տեսակէտից։

Նոյն միտքը յայտնում է այժմ և «Русская Рѣчь» ամսագիրը, որ մեծ հեղինակութիւն ունի ռուսաց հասարակական կարծիքի մէջ։

Ռայց ռուս ամսագրի միտքը իրագործված տեսնելու համար, չը պէտք է մոռանալ, որ Թիւրքիայի և Պարսկաստանի հայ երիտասարդութեան վրա ներգործելու ամենագործնական միջոցը կը լինէր հիմնել մեզանում այնպիսի մի համալսարան, որ եթէ իր կազմակերպութեամբ տարբեր չը լինէր մնացած ռուս համալսարաններից, գոնէ թոյլատրէր բացի ուսանողներից, ազատ լսողներին էլ մուտք ունենալ դասարանների մէջ։

Ռայատրենք մեր միտքը։ Ռուսաց համալսարանները գերմանական համալսարանների պէս չեն, որտեղ գիտութիւնը նոյն իսկ գիտութեան համար են ուսումնասիրում, բայց մեզ մօտ երիտասարդը մտնում է համալսարան գլխաւորապէս ոչ թէ գիտութեան համար, այլ դիպլոմի համար, որ նրան պետական ծառայութեան իրաւունքներ է տալիս։ Ուրեմն ուսանողը գեռ առաջին դասընթացքից չինովնիկ է արդէն և ոչ թէ գիտութեան ծառայող։ Մեր համալսարանները իսկապէս նախակրթարան են պետական ծառայողների դասակարգի համար։ Համալսարանի դիպլոմը մեզ մօտ պետական իրաւունքներ է տալիս, այն ինչ ոչ մի ուրիշ երկրում համալսարանի դիպլոմը պետական իրաւունքներ չէ տալիս, այլ միայն գիտնական իրաւունքներ։

Եթէ համալսարանը պետական ասպարէզի վրա ծառայելու համար իր դիպլոմով իրաւունքներ չէր տայ, այն ժամանակ համալսարան կը մնային գլխաւորապէս այն մարդիկ, որոնք ճշմարիտ հետաքրքրվում են գիտութեամբ և կուգենային իրանց ոյժերը նուիրել գիտութեանը։ Իսկ այժմ մեծ մասամբ մտնում են մեր համալսարանները այն մարդիկ, որոնց միակ նպատակն է, շուտով ուսումը աւարտելուց յետոյ, ընդունված լինել պետական ծառայութեան մէջ։

Եթէ Թիֆլիսի մէջ հիմնվելու համալսարանը իր դիպլոմով ոչինչ իրաւունքներ չէր տայ աւարտողին, այն ժամանակ համալսարանը կը լցվեր նոյն իսկ այնպիսի երիտասարդներով, որոնք գիտութեան են ձգտում գիտութեան համար, կը լցվեր Պարսկաստանից և Թիւրքիայից եկած հայ երիտասարդութեամբ։ Այն ժամանակ կիրագործվեր «Русская Рѣчь» ամսագրի գաղափարը՝ Թիֆլիսի համալսարանի միջոցով ներգործել Թիւրքաց հայերի ինտելիգենցիայի վրա։ Իսկ եթէ համալսարանը դարձեալ իրաւունքներ կը շնորհի, այն ժամանակ նրա մէջ կընդունվին միմիայն կլասիկային գիմնազիայում ուսում աւարտածներ։ Այս այն ժամանակ ռուս ամսագրի միտքը կը կարողանայ իրագործվել, որովհետև Թիւրքաց հայերի երիտասարդութիւնը համալսարանի մէջ ընդունվելու համար գեռ ստիպված կը լինի նախ և առաջ ընդունվել մեր գիմնազիաներում։ Իսկ դա հարիւր թէ հնարաւոր է, մանաւանդ որ հիմա էլ միայն իրրև բացառութիւն տեսնում ենք մեր գիմնազիաներում օտարահպատակ հայ երիտասարդներին։

Եթէ դժուար է յուսալ որ Թիֆլիսի համալսարանը բացառութիւն կազմի բոլոր մնացած ռուս համալսարաններից և դարձեալ նոյն իրաւունքներ կը տայ իր դիպլոմով ուսում աւարտողներին, այն ժամանակ դարձեալ մի միջոց է մնում «Русская Рѣчь» ամսագրի և մեր միտքը իրագործելու համար՝ այն է թոյլ տալ որ բացի ուսանողներից ընդունվին համալսարանում և ազատ լսողներ։

Հասկանալի է որ «Русская Рѣчь» ամսագրի միտքը իրագործելու համար, կարելի է դրաւել օտարահպատակ հայ երիտասարդներին միմիայն իրաւունք տալով պրոֆէսորներին կարդալ իրանց դասախօսութիւնները, բացի ռուսերէն լեզուից, և այն օտարերկրացի հայերի համար մատչելի, հասկանալի լեզուով։

Դ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱՂԴԱԴԻՑ

—

18 օգոստոսի

«Մշակի» 129 համարում Բաղդադից մի պարսկ, վաճառական ստորագրութեամբ, «Մարդ. ընկեր» գրագրական վիրաբերութեամբ խօսելու ժամանակ ասում զրպարտում է Մելիք-Մաուսանցին, որ վաղուց թողած է իր պաշտօնը։ Թէկն ոդպիսի անհեթեթ գրուածքի վրա աւելորդ էր ուշադրութիւն դարձնել, բայց որովհետև այս համակում չոչափվում է գրագրակի պատիւը, ուստի չէր կարելի լռել։ Պարոնը բոլորովին կրքից շարժված է գրել նորա մասին, իսկ ինչ որ վերաբերում է Մելիք-Մաուսանցի անընդունակութեանը, արդեօք մատենագրական գրասէր լինելու համար բաւական չէ՞ դպրական 5-դ դասատան կուրսը ուսարտած մի ուսանող։ Այդպէս բարձր գիտութիւն չէ՞ հարկաւոր, միմիայն ընթերցողների ցանկացած գրքերը և կամ լրագիրները տալ և յետ առնալ։ Իսկ թէ մի այցելուի հետ կռիւ է պատահել, այն ևս մարտ ասում, միթէ գրպանը իրաւունք չունի գրագրանի կանոնների և բարեկարգութեան ընդդէմ վարվող մի պարոնին հրաժարանել գրատանից և միթէ յայտնի չէ չատերին, որ «Մարդասիրական ընկերութիւնը» զրկեց նմանապէս պարոն այցելուին անդամութիւնից։ Խորհուրդ եմ տալիս պարոն վաճառականին, որ իր գործով զբաղվի, և գլուխը կախ գցած, իր կոպէկների հաշիւը տեսնէ։

* * *

ՆԱՄԱԿ ԴՈՒՇԷԹԻՑ

—

13 օգոստոսի

Չը կայ մի հայրենակ գիւղ, որտեղից մենք չը լսենք, թէ վրան քահանան կամ վարդապետը խասայ է պատում, ապօրինի օրդիք ունի, փսան քահանան ժողովրդին հարստահարում է, կողոպտում է, գիշերները կարտ է խաղում, իսկ առաւօտները պատարագ անում և այլն։ Մի կինտս ինչ և իցէ հնարքով և միջոցով քահանայ է դառնում, շորերը փոխում, երկար փարաջայ հագնում, գաւազանը ձեռքը առնում։ Մենք տեսնելով նրան քահանայի զգեստում, չը հարցնելով, թէ ով է եղել, մտանում ենք և տաք տաք օծված սուրբ աջը համբուրում։ Բայց արժանապատիւ քահանան սկսում է իր խասաթը, կինտսն միշտ կինտս կը մնայ, երկար փարաջէն և գաւազանը նրա բնաւորութիւնը չեն փոխիլ։ Նա սկսում է կողոպտել, ճնչել ժողովրդին, արքեպիսկոպոսին անել և այլն։ Մենք տեսնում ենք այդ բոլոր վարմունքները, զոռում, գչում, գանգատվում ենք, բայց դարձեալ չարութեան առաջը չենք կարողանում առնել, որովհետև նա հոգեոր սական է և իրաւունքը հոգեոր իշխանութեան ձեռքին է։ Այսպիսի մի արժանապատիւ քահանայ էլ մեր Դուշէթումը կայ։ Այս պատուարժան քահանան 10 տարի սրանից առաջ, դուրս գալով Ներսիսեան դպրոցի տարին դասատներից, որտեղ սովորել է ռուսերէն մայեամ տարվայում և հայերէն սաղմոս և աւետարան, սկսել է տիրացութիւն անել Թիֆլիսի Զուղուրեթի եկեղեցում։ Բայց Մակար արքեպիսկոպոսը հրաժարել էր նրան տիրացութիւնից, նան դրկել քահանայ դառնալուց նրա վատ բարքի և վարքի համար։ Վերջապէս, երբ Մակարի տեղ հանգուցեալ Գրիգորէ արքեպիսկոպոսը ընտրվեց, մի ինչ և իցէ միջոցով նա արժանացաւ քահանայական աստիճանի։ 1877 թ.ին ուղարկվեցաւ նա գործակալի պաշտօնով Դուշէթ։ Մի երկու ամիս լաւ պահեց իրան, յետոյ սկսեց իր սովորութիւնը և մինչև այժմս էլ շարունակում է։ Հաղարաւոր գանգատներ են գնացել նրա մասին Թիֆլիսի կենտրոնը, թէ նա կողոպտում է, չատերը ստիպված դիմում են օտար եկեղեցին պատկանելու, իրանց երեխայքը այնտեղ սկրեթ տալու, և մուսիները օտար ազգի քահանայի թաղել տալու և այլն։ Նա ուշադրութիւն չէ դարձնում և հանդարտ շարունակում է իր հունձքը։ Նա մինչև ամենատրամիկի չը քաշտրից 15—20 բուրլի չէ առնում, նրան չէ պրսակում, մինչև իր պահանջածը չէ ստանում մուռեալ չէ թաղում և երեխայ չէ մկրատում։ Թիֆլիսի կենտրոնական բարեհաճեց երկու անգամ քննիչներ ուղարկել Դուշէթ. առաջինը 1878 թ.ին Գօրու յայրդ Գառնակերեանց վարդապետն, երկրորդ անգամ 1879 թ.ին իր անդամ ասէր-Արիստակէս Բենգլեանցին։ Առաջինը եկաւ, պատրի փոխարէն խոստացաւ զորձակալին քահանայական խաչ և

ՆԱՄԱԿ ԴՈՒՇԷԹԻՑ

—

13 օգոստոսի

Չը կայ մի հայրենակ գիւղ, որտեղից մենք չը լսենք, թէ վրան քահանան կամ վարդապետը խասայ է պատում, ապօրինի օրդիք ունի, փսան քահանան ժողովրդին հարստահարում է, կողոպտում է, գիշերները կարտ է խաղում, իսկ առաւօտները պատարագ անում և այլն։ Մի կինտս ինչ և իցէ հնարքով և միջոցով քահանայ է դառնում, շորերը փոխում, երկար փարաջայ հագնում, գաւազանը ձեռքը առնում։ Մենք տեսնելով նրան քահանայի զգեստում, չը հարցնելով, թէ ով է եղել, մտանում ենք և տաք տաք օծված սուրբ աջը համբուրում։ Բայց արժանապատիւ քահանան սկսում է իր խասաթը, կինտսն միշտ կինտս կը մնայ, երկար փարաջէն և գաւազանը նրա բնաւորութիւնը չեն փոխիլ։ Նա սկսում է կողոպտել, ճնչել ժողովրդին, արքեպիսկոպոսին անել և այլն։ Մենք տեսնում ենք այդ բոլոր վարմունքները, զոռում, գչում, գանգատվում ենք, բայց դարձեալ չարութեան առաջը չենք կարողանում առնել, որովհետև նա հոգեորական է և իրաւունքը հոգեոր իշխանութեան ձեռքին է։ Այսպիսի մի արժանապատիւ քահանայ էլ մեր Դուշէթումը կայ։ Այս պատուարժան քահանան 10 տարի սրանից առաջ, դուրս գալով Ներսիսեան դպրոցի տարին դասատներից, որտեղ սովորել է ռուսերէն մայեամ տարվայում և հայերէն սաղմոս և աւետարան, սկսել է տիրացութիւն անել Թիֆլիսի Զուղուրեթի եկեղեցում։ Բայց Մակար արքեպիսկոպոսը հրաժարել էր նրան տիրացութիւնից, նան դրկել քահանայ դառնալուց նրա վատ բարքի և վարքի համար։ Վերջապէս, երբ Մակարի տեղ հանգուցեալ Գրիգորէ արքեպիսկոպոսը ընտրվեց, մի ինչ և իցէ միջոցով նա արժանացաւ քահանայական աստիճանի։ 1877 թ.ին ուղարկվեցաւ նա գործակալի պաշտօնով Դուշէթ։ Մի երկու ամիս լաւ պահեց իրան, յետոյ սկսեց իր սովորութիւնը և մինչև այժմս էլ շարունակում է։ Հաղարաւոր գանգատներ են գնացել նրա մասին Թիֆլիսի կենտրոնը, թէ նա կողոպտում է, չատերը ստիպված դիմում են օտար եկեղեցին պատկանելու, իրանց երեխայքը այնտեղ սկրեթ տալու, և մուսիները օտար ազգի քահանայի թաղել տալու և այլն։ Նա ուշադրութիւն չէ դարձնում և հանդարտ շարունակում է իր հունձքը։ Նա մինչև ամենատրամիկի չը քաշտրից 15—20 բուրլի չէ առնում, նրան չէ պրսակում, մինչև իր պահանջածը չէ ստանում մուռեալ չէ թաղում և երեխայ չէ մկրատում։ Թիֆլիսի կենտրոնական բարեհաճեց երկու անգամ քննիչներ ուղարկել Դուշէթ. առաջինը 1878 թ.ին Գօրու յայրդ Գառնակերեանց վարդապետն, երկրորդ անգամ 1879 թ.ին իր անդամ ասէր-Արիստակէս Բենգլեանցին։ Առաջինը եկաւ, պատրի փոխարէն խոստացաւ զորձակալին քահանայական խաչ և